

Հ.Մ.Ը.Մ. Երուսաղեմի Սկաուտական Տողանցք Հայկական Ս. Ծնունդի Առթիւ

18 Յունուար 2006
Բեթլեհէմ

Հակառակ ստացուած գնահատումներուն թէ Չորեքշաբթի օր Յունուար 18ին արեւոտ առաւօտ մը պիտի դիմաւորէ մեր սկաուտներուն եւ վերջապէս պատրիարք Զօր, այդպէս չպատահեցաւ այլ ընդհակառակը ցուրտ առաւօտը դիմաւորեց մեր սկաուտներուն եւ եթէ մի քիչ տրամաբանութիւն ունենային անոնք հաւանաբար իրենց ակումբներէն դուրս չգային:



Այսուհանդերձ, որովհետեւ սկաուտիզմը չարքաշուքեան գաղափարախօսն է եւ որովհետեւ Հ.Մ.Ը.Մ.ի թէ Հ.Ե.Մ.ի սկաուտները անբողջ երկու ամիս այս օրուան դուրս գալու ծրագրերով կ'ըմբռնէին մանաւանդ որ զոյգ խումբերու համար նուագախումբի նոր սարքածներ էին գնուած (արդիական Primiere թմփուկներ) սկաուտները դուրս եկան համաձայնուած պահուն եւ ժամը 10ին յորդ անձրեւի տակ ժամանեցին Քրիստոսի Ս. Ծննդեան Այրի հանդիպակաց հրապարակը Բեթլեհէմ քաղաքի մէջ, ուր ընդհանրապէս Հայերէ բաղկացած կոկիկ բազմութիւն մը կը սպասէր Պատրիարք Զօր ու միաբանական դասու ժամանման:



Սրբազան պատրիարք Զոր մուտքը սպասող երեւելիներու շարքին կարելի էր տեսնել Բեթղեհէմ քաղաքի կառավարիչը, քաղաքապետը, ոստիկանապետը եւ այլ զինուորական եւ քաղաքական ներկայացուցիչներ:

Սկաւաւները, հակառակ անձրեւին եւ ոչ պակաս բուքին, կանոնաւոր շարքերով Բեթղեհէմի նեղ փողոցներէն ուղղուեցան մինչեւ քաղաքի մուտքը (մօտ քիլոմէթր մը ճամբայ) ընդունելու Սրբազան Զոր շքախումբը ու նուագով առաջնորդելու անոնց մինչեւ հրապարակ, համաձայն տարիներու սովորութեան:



Բեթղեհէմի Հայոց զանգակատան Հովանու ներքեւ Հ.Մ.Ը.Մ.ի սկաւաւ թմբկահարները թէ փողերախումբը առաւել Գայիկներու Կոհնակը:

Պատրիարք Զոր շքախումբը ժամանեց հրապարակ ուր Հ.Մ.Ը.Մ.ի սկաւաւները իրենց փողերի նուագով բացառիկ ճարտարութեամբ ներկայացուցին «Մեր Հայրենիք»ը ու հակառակ ցուրտ ու բուքին պարտադրեցին որ միաբանական թափորը պահ մը դանդաղի մինչեւ իսկ կանգ առնի եթէ ոչ Հայրենիքի ի պատիւ այլ վստահաբար Հ.Մ.Ը.Մ.ի խրոխտ սկաւաւ տղոց ի յարգանս:

Անգամ մը եւս, Հ.Մ.Ը.Մ.ի սկաւաւ թմբկահարները թէ փողերախումբը յաջողեցան օրուան պատշաճ, Քրիստոսի Ծննդեան անեման պահուն հարազատ, ելոյթ ունենալ, պատիւ անոնց:

Յաւելեալ նկարներ Անգլերէն բաժնին մէջ: